

Հայտարարություն լրատվամիջոցների ներկայացուցիչների նկատմամբ կիրառված ճնշման և բռնության դեպքերի կապակցությամբ

21 դեկտեմբերի, 2020թ. , Երևան

Դեկտեմբերի 19-ին Երևանի «Եռաբլուր» զինվորական պանթեոնում, արցախյան պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված սգո արարողության ժամանակ, ֆիզիկական բռնության է ենթարկվել միջոցառումը լուսաբանող «Ազատություն» ռադիոկայանի օպերատոր Դավիթ Հարությունյանը: Քաղաքացիները, որոնք մտադրվել էին խոչընդոտել վարչապետ Նիկոլ Փաշինյանի և սգո երթին մասնակցող նրա աջակիցների մուտքը «Եռաբլուր», «հեսա «Ազատություն»-ը» գոռալով հարձակվել են օպերատորի վրա, զցել գետնին ու հարվածներ հասցրել նրան: Նույն օրը, սգո երթի մեկնարկին, Հանրապետության հրապարակում թիրախավորվել է «5-րդ ալիք» հեռուստաընկերության լրագրող Լարա Առաքելյանը: Նախ հավաքի մասնակիցները վիրավորել և ճնշման են ենթարկել նրան, ապա Ազգային ժողովի «Իմ քայլը» խմբակցության անդամ Անդրանիկ Քոչարյանը խտրական վերաբերմունք է ցուցաբերել լրատվամիջոցի նկատմամբ: Հրաժարվելով պատասխանել Լարա Առաքելյանի հարցերին՝ պատգամավորը հայտարարել է, որ պատրաստ է հարցազրույց տալ ներկա ցանկացած լրատվամիջոցի, բացի «5-րդ ալիք»-ից:

Այսօր էլ Սյունիքի մարզում, Գորիս տանող ճանապարհին, քաղաքացիները անվայելուչ արտահայտություններ են թույլ տվել վարչապետ Նիկոլ Փաշինյանի այցը լուսաբանող՝ «Ազատություն» ռադիոկայանի թղթակից Ռոբերտ Զարգարյանի հասցեին՝ փորձելով խոչընդոտել նրա աշխատանքը:

Մենք՝ ներքոստորագրյալ կազմակերպություններս, դատապարտում ենք լրագրողների նկատմամբ կիրառված անթույլատրելի գործողությունները: Այս միջադեպերն ակնհայտորեն արտացոլում են հասարակության ծայրահեղ բևեռվածությունը, տիրող ատելության մթնոլորտը: Իրավիճակի առողջացմանը չի նպաստում նաև լրատվամիջոցների՝ ըստ քաղաքական ճամբարների բաժանված լինելու փաստը: Այդուհանդերձ, երկրում հասարակական-քաղաքական կայունությանը նպաստելու այլ ելք չկա, քան հանդուրժողականության հաստատումը, այլ կարծիքների նկատմամբ քաղաքակիրթ վերաբերմունքի և կառուցողական բանավեճի մշակույթի ձևավորումը: Իսկ այս ամենը պետք է վերահաստատվի նախևառաջ լրատվամիջոցների ներկայացուցիչների նկատմամբ ցուցաբերվող զսպվածությամբ և հարգանքով:

Համոզված ենք, որ ստեղծված իրավիճակը հնարավոր չէ հաղթահարել, եթե լրագրողների նկատմամբ ոտնձգություններ իրականացնողներն անպատիժ մնան: Ի դեպ, անցնող տարվա ընթացքում նմանատիպ ոչ մի դեպքով մեղավորները չեն պատժվել: Իսկ անպատժելիությունը, ինչպես հայտնի է, նոր իրավախախտումներ է

ծնում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պահանջում ենք.

- ՀՀ ոստիկանությունից՝ բացահայտել նշված միջադեպերի ընթացքում ՁԼՄ-ների աշխատակիցների գործունեությունը խոչընդոտողներին և պատասխանատվության ենթարկել նրանց,
- Քաղաքական ուժերից և նրանց համակիրներից՝ զսպվածություն և հանդուրժողականություն ցուցաբերել ցանկացած լրատվամիջոցի նկատմամբ՝ անկախ քաղաքական կողմնորոշումից:

ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

ՄԵԴԻԱ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ «ԱՄՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ

ԻՆՖՈՐՄԱՅԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ – ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ

«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ» ՀԿ

«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ» ՀԿ

ԳՈՐԻՄԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ